

№ 7

БОЛТУ

1887

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 7

Ձորս եղանակներ Մուշեղ Մամիկոնեան,
Ղուար-Դանասի (Հէքիաթ) Հասո:
Վահան Մամիկոնեան (Հայոց Պատմութիւնից) Ա. Բաբախանեան,
Մենդալար (բանաստեղծութիւն) Աղէք. Մատուրեան:

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ընտանեկան գրոյցները (Դիսանդէից) Խաչիկ:

ՏԵՂԱԴՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Կաթ. Թ. Ն. Տէր-Աւետիքեան:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Միկիներից աղաառելու միջոց, Մաղամորթները հաւիթները մէջ, Սև
անձրև, Շնչառութեան մասին:

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Ձեռք համբուրելու սովորութիւնը:

ԶՈՒԱՐՃԱԼՔ

Հանելուկներ: Առաջարկութիւն: Շուտասելուկ, Նախընթաց ԱՆՆ-ի մէջ
եղած հանելուկների, կրիպտոգրամի, առաջարկութեան և բերուսի
բացատրութիւնները:

ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

Ի նկատի ունենալով այն ուսուցչուհիներն ու ուսուցիչները, որոնք ցանկանում են պարապել երեխաների՝ հետ ամեն առարկայից, և պատրաստել աշակերտներ զանազան ուսումնարանների համար, և այն ընտանիքները, որոնք ընդունում են զիշերթիկներ երկուսեւից ևս, կարող են զիմել խմբագրութեանո:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 5 հատ և օթը կոպէկանոց ծարկաներ և անդորրագիրը (կամ հասցէի հին բանդերօլը), որի փոխարէն նորը կուղարկուի, հակառակ դէպքում դարձեալ կուղարկուի հին հասցէով:

Խոնարհաբար խնդրում ենք, մեր յարգելի բաժանորդներին, որոնք դեռ չեն վճարել «Աղբիւրի» բաժանորդագիրը բարեհաճէն փութով հասցնել մեզ:

«Աղբիւրի» առաջիկայ № 8-ը լոյս կրտեսնի № 9-ի հետ, ինչպէս միշտ անում ենք, սեպտեմբերի 1-ին:

Լոյս տեսաւ

Ր Ա Փ Փ Ի Ի

Կ Ա Յ Ծ Ե Ր

Ր. ՀԱՏՈՐ

Գինն է 2 Ր. 50 Կ.

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

Բաժանորդագրութեան գինն է հան-
լիկ 8 Փր. վեցամսեայ 5 Փր. Մէկ Թի-
առանձին կրկնառուի 1 Փր.:

Հասցէն՝ A la Rédaction de la
Revue „Hantess“ Au Convent
des RR. PP. Mechitharistes

A Vienne (Autriche)

VII. Mechitharistengasse 4.

Լ Ե Ձ Ո Ւ

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ ԱՄՍՕՐԵԱՅ

Տարեկան գինն է, կէս օսմանեան ոսկի.

Հասցէն՝ Կ. Պօլլեռ, Պեդգեռճեան
գրաստուն, Յակոբբեան Խան Ա՝ 14:
Խմբագիր-Տէր Զ. Սերովբէ Տերվիշեան.

L'AMI DES ENFANTS

ILLUSTRÉ

OU

L'ÉDUCATION

A l'Ecole et dans la Famille.

Directeur: l'Abbé Roussel.

Neuvième année; abonnements
un an: 10 fr. Etranger, 12 fr.
Un numéro, 30 centimes, Admi-
nistration, 40, rue La Fon-
taine, Paris-Auteuil dépôt: 15,
rue Fékou (près saint-Sulpice)
Paris.

Я. И. СОСИНЪ ВЪ ОДЕССѢ

Է. Ի. ՍՕՍԻՆ Օդեսսայում ՄԱՏԱԿԱՐԱ-
ՐՈՒՄ է ամեն տեսակ ապրանք, նիւ-
թեր եւ մերկաններ: Բոլոր հարցում-
ներին անմիջապէս պատասխանում է
անվճար: 1—1

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՄԵՋ ՎԱՃԱՌ-
ՎՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱ-
ՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

	ա.	Կ.
1) «Ալլըիս րէ» 1883 Թ. վա- ռակալմ	10	—
Նոյնը անկալմ	8	—
2) » 1884 Թ. փառակալմ 4 — Նոյնը անկալմ	3	—
3) » 1885 Թ. փառակալմ 10 — Նոյնը անկալմ	8	—
4) » 1886 Թ. փառակալմ 10 — Նոյնը անկալմ	8	—
5) Փայտաշէն խրճիթի՝ սպիտակ առնելը (Ջեմա Գարֆիլդէի կենսալր.) պատկերազարդ .	60	
6) Հսկայ մըջլան (պատկերա- զարդ)	40	
7) Ժան Բատիստ Լիւլլի ման- կութիւնը	10	
8) Ոսկի ձկնիկ I սերէա	30	
Նոյն » II սերէա	05	
9) Բուսական աշխարհից՝ մշա- կութեան անմշակ ծառի կեանքը	30	
10) Չարաձձի Աբամի արկածնե- րը (38 պատկերներով)	50	
11) Ֆրեանսիզի գիւցաղն (նորմա- նական Հին գրոյց, պատկե- րազարդ)	40	
Ն. Տ.-Ա.ԻԵՏԻՓԵԱՆ Քնար խոս- նակ	50	
ԼԻՏՎՈՍ Պօզնանի ուսուցչի օրա- գրէց	20	
ՍԼՅՈՒՄ ԴՅՈՒԷ Երկու մանրավէպ .	15	
ԱՆԴԵՐՍԵՆ Սոխակ եւ Խոզարած .	20	
ԴԻԿԷՆՍ Հարս եւ սկեսուր	15	
Կ. Մ. ՇԱՀՆԱՋԱՐԵԱՆ Ղըլըցի կընտանեց պընը-փէշակը (Ղա- րաբաղի կեանքէց)	20	

ՄՇԱԿ

Հրատարակվում է Թիֆլիզում,
նոյն գիրքով և նոյն պրոգրամա-
յով: «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10
ռ. է, վեց ամսուանը 6 ռ.:

Գրուել «ՄՇԱԿԻՆ» կարելի է
ԽՄԲԱԳՐԱՅԱՆԸ (Բարոնակայա և
Բազարնայա փողոցները անկիւ-
նում, Թամամշելի տանը):

Կայսերութեան ուրիշ քաղաք-
ներէջ «ՄՇԱԿԻՆ» գրուելու համար
պէտք է գիտնել հետեւել հասցէով.
ТИФЛИСЪ, Редакция газеты
«МПАКЪ». իսկ արտասահմա-
նէջ. Tiflis. Rédaction du journal
arménien «MSCHAK»

Խմբ.-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ



Պատկերազարդ Հրատարակութեան
ամիսը երկու անգամ, տարեկան գինը
4 ռ.: Հրատարակվում է Պոլտու, ստա-
րադրուել կարելի է «Աղբիւր» ամսագրի
խմբագրատանը:

ԳԻՏԱԿԱՆ ԶՈՐԺՈՒՄ

Հանդէս ամսեայ

Հրատարակվում է Կ. Պոլտու.

Տնօրէն խմբ. Տաղապարեան

Բաժանորդ գրուել կարելի է «Աղբիւ-
րի» խմբագրութեանը: Գինն է 2 ռ. 50 կ.

ԱՐԱՐԱՏ

Կրօնական, պատմական, բանասիրա-
կան ամսագիր. տարեկան գինը Ռու-
սաստանում 4 ռ.: Հասցէն՝

Св. Эчмиадзинъ, Ред. „Араратъ“.

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆԻ

Մանկական Պարտէզ երկու սեռի
երեխաների միասնաբար ուսման
համար և օրհորդաց գիշերօթիկ
ուսումնարան:

ԱՂԵԻԿ

ՄԻՐՈՒՄԵՑ ՊԱՏԿԵՐՁԱՐԻ ԶԵՆԻԿՍ

(Երեխաների և դաստիարակների համար)
Հրատարակվում է միեւնոյն գիրքով,
միեւնոյն ուղղութիւնով և նոյն աշխա-
տակիցների մասնակցութիւնով:

Հասցէն Тифлисъ, Редакция „Ар-
бюрт“, իսկ արտասահմանից՝ Tiflis
(Caucase) Rédaction du journal
„AGBUR“.

Խմբ.-Հրատ. Տ. Նազարեանց:

Լոյս տեսու

Գ. Կաֆեանի լրագրամանութեամբ

ՕՐ. ՍԻՒԶԱՆ ԿՐԵՆԱՅԻ

Ե Ր Ե Ք Ա Ն Ե Ր Ը

ԵՒ

ԵՐԱՆՑ ԲԱՐԵՎԵՄՆԵՐԸ

Վերնագրով մանկական պատկե-
րազարդ շքեղ Հրատարակութիւ-
նը: Գինը 50 կ. է, «Աղբիւր» բա-
ժանորդներին համար 40 կ.

Նախվում է «Աղբիւրի» խմբագրատանը
և Թիֆլիզի յայտնի գրախանութանոց-
ներում:

ԲԱԶՄԱՎԷՊ

Նախմտայ պատկերազարդ Հանդիսարան.

Բաժանորդագրու թիւան գինն է կան-
խիկ վճարելի. 10 Փռ. (4 ռ.)

Հասցէն՝ Au Rédacteur de la
Revue Polyhistoire, à Venise, Ile
de St. Lazare.

РОДНИКЪ

Дѣтск. иллюстр. ежемѣсячн. журн.
подпис. цѣн. съ прилож. „Воспит. и
Обучен.—6 р. Въ видѣ преміи год. под-
пис. пол. тетр.-альб. „По Рус. Земль“.

Ред.-Изд. Е. Сысоева. Подпис. цѣн.
6 р. съ пересыл. С. П. Б. Никольская
площ. д. № 4.

ԱՂԲԻՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՐԱՆԵՐԻ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 7

Յ Ո Ւ Լ Ի Ս

ԹԻՖԼԻՉ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԲԷԼԵՍՆ ՓՈՂՈՑ, № 1 | 2


1887

Дозволено цензурою, Тифлисъ, 14 Іюля 1887 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

ՁՈՐԾ ԵՂԱՆԱԿՆԵՐ

ԳԱՐՈՒՆ



ըր տաքցաւ. ձիւնը հալուեց արեւից.
Քրլքլալով ջուրն հոսում է դռներից.
Փափուկ հողը զարդարուեցաւ կանաչով.
Դաշտը ծածկուեց ոչխարների հօտերով:

Հա՛, Հա՛, Հա՛,—գարուն է,
Տեսէ՞ք ինչպէ՞ս սիրուն է:

Ա. Մ. Ա. Ռ.

Սաստիկ շոք է. ցորեն դարին հասել են.
Հնձողները խոտը քաղել, դիզել են.
Բոլոր ծառեր ծածկընել են տերևով,
Պտուղները «ճիթ» են անում ժպտելով:

Հօ՛, Հօ՛, Հօ՛,—ամառ է,
Արևը խիստ կրվառ է:

Ա Շ Ո Ւ Ն

Օրերն հովցան. պտուղները քաղեցին.
Հացով, մրգով ամբարները լցրեցին:
Երկինքն ամպեց, բարակ անձրև է մաղում,
Մերկ դաշտերը և ծառերը ողողում:
Է՛յ, է՛յ, է՛յ—աշուն է,
Պտուղ, բերքեր շատ ունէ:


Ձ Մ Ե Ռ

Օրը կարճ է. արև չկայ, շատ ցուրտ է.
Ճերմակ ձիւնը քուլայ-քուլայ կըբրթէ.
Մարդ, անասուն ցրտից բքից վախեցած,
Տաք-տաք տներն, խոր-խոր բներն են մտած:
Օ՛յ, օ՛յ, օ՛յ—ձմեռ է.
Աշխարհ սառել մեռել է:

ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ



ՂՈՒԱՐ-ԴԱՆԱՍԻ



ի անգամ սենեակումս նստած էի, փոքրիկ Ստեփանը կանգնեց մօտս և ասաց. «Գիտե՞մ դու հեքիաթ սիրում ես, լսի՞ր, ես քեզ մի հեքիաթ կըսպատմեմ, և եթէ յարմար կըլինի՝ գրի»։ Լաւ, ասացի, պատմի՛ր տեսնենք. և նա սկսեց պատմել։

«Կըլինի, չի լինիլ, ժամանակով մի ձկնորս կըլինի և տղայ չի ունենալ։ Ձկնորսը շատ կըմտածի այդ մասին և Աստուածանից մի որդի կըխնդրի, որ իրանից յետոյ իր տունը չփչանայ և իր ցեղը չկտրուի։ Այս տեսակ մտածմունքի մէջ մի անգամ ձկնորսը ուռկանն առած ծովն էր դնում ձուկ որսալու՝ և ահա, որտեղից որտեղ՝ պատահեց նրան մի դէրվիշ։ «Ձկնորս եղբայր, կասի դէրվիշը, ինչո՞ւ ես այդպէս տրտնւմ տխուր մտածում»։ Ձկնորսը կըսպատասխանի.

«Ես չտրտմեմ, բա ո՞վ տրտմի.
Ապրուստ չունիմ, չունիմ որդի:
Դէրվիշ եղբայր, ասա խնդրեմ,
Ես անբաղդս ի՞նչ պիտ անեմ,
Որ Աստուած ինձ մի որդի տայ,
Որ իմ տունը միշտ շէն մնայ.
Մահիցս յետոյ մէկը լինի՝
Որ իմ գերեզմանս օրհնի»։

Դէրվիշը պատասխանեց.

«Սուրբ Նշան դուք ուխտ գնացէք,
Եօթն դիշեր հսկում արէք,

Եօթն անձին երինջ մորթեցէք,
Աղքատներին բաժանեցէք:
Աստուած ձեր ձայնը կըլսի,
Մատաղներդ հա կընդունի,
Խնդիրներդ կըկատարի
Եւ ձեզ տղայ կըպարգևի»:

«Արարդէի» խօսքը դեռ չէր հասել ձկնորսի ականջին՝ դէրվիշն անեղևոյթ եղաւ: Ձկնորսը նոր իմացաւ, որ դէրվիշը հառարակ, հողեղէն մարդ չէր. ուրախ ուրախ տուն վերադարձաւ և պատմեց կնոջը ինչ որ պատահել էր. կինն էլ շատ ուրախացաւ, և մարդ ու կին բոլոր պատրաստութեամբ Սուրբ Նշան ուխտ գնացին: Աստուած ձկնորսի և նրա կնոջ խնդիրը կատարեց. տարին չլրացած՝ նրանց մի սիրուն որդի պարգևեց, որի անունը դրին Վահան: Ով տարով կրթեճանայ, Վահանն օրով ու շաբաթով էր մեծանում: Հայրն ու մայրը նրա վրայ իրանց աչքի լուսի պէս հոգս էին քաշում, և աշխատում էին որ իրանց միևնուճար որդին լաւ և աստուածավախ մարդ դառնայ: Վահանը չափահաս դարձաւ: Եղաւ որ ձկնորսը հիւանդացաւ և տեսնելով որ մահը մօտեցել է, կանչեց իր մօտ Վահանին, ձեռքը բռնեց ու ասաց.

«Վահան, որդիս, ես մեռնում եմ,
Ե՛կ, քեզ կտակս աւանդեմ.
Հօրդ արհեստը շարունակիր,
Մօրդ պահէր ու պահպանիր,
Առաքինի, սուրբ կեանք վարիր,
Մի ծուլանար, սուտ մի խօսիր,
Աստուած լիշեր, դժբ կատարիր,
Արհեստիցդ միշտ գոհ եղիր:
Ինչպէս որ ինձ՝ Աստուած քեզ էլ
Իր գթութիւնն չի խնայիլ»:

Մեռաւ ձկնորսը. Վահանը խորին տխրութեամբ իր հօրը թաղեց. մի քանի օրից յետոյ հօր ուռւկանն առաւ ու ծովի ափը գնաց ձուկ որսալու: Եւ գոհ սրտով շարունակում էր ձկնորսութիւնը. ձկներից մի մասը ծախում, հացի էր տալիս, մի մասը բերում էր տուն և մօր հետ կերակրւում էին:

* * *

Ջատ անցաւ, քիչ անցաւ, շատ ու քիչն Աստուած գիտէ, մի օր էլ Վահանը գնաց ձուկ որսալու. երեք անգամ ուռւկանը ծովից դուրս քաշեց, երեք անգամն էլ մի և նոյն կրեան դուրս եկաւ ուռւկանի հետ, որին միշտ Վահանը, ինչպէս մի անպէտք բան, ծովն էր նետում. չորրորդ անգամին դարձեալ նոյն կրեան և երեք ձկներ դուրս եկան. Վահանը, իմ բաղդն է, ասաց, ու կրեան էլ ձրկների հետ առաւ շուկան գնաց. ձկներից մէկը վաճառեց, հացի տուեց և մնացեալներն ու կրեան տուն բերեց. կրեան դրեց պահարանի մէջ, իսկ ձկները տուեց մօրը, որոնցով և կերակրուեցին այն օրն էլ:

Հետեւեալ առաւօտը, Ադամայ մութը դեռ չէր փարատուել, աղօթարանին (արշալուսին) մայրն ու Վահանը քնից վերկացան, հագնուեցին, լուացուեցին. Վահանը կարճ աղօթքից յետոյ առաւ ուռւկանն ու ծովը գնաց, իսկ մայրը գնաց եկեղեցի: Երբ վերադարձաւ եկեղեցուց, ինչ տեսնի լաւ — տունն աւլած, խորդած (զարդարած), կերակուրը եփած, հացը թխած և սեղանը պատրաստ: Մայրը զարմացաւ և հիացած՝ չէր կամենում հաւատալ իր աչքերին: Եկաւ և Վահանը. մայրը պատմեց նրան իր տեսածը. Վահանն էլ զարմացած մնաց: Նոյնը պատահեց և երկրորդ ու երրորդ օրը: Վահանն ու իր մայրը մտածեցին իմանալ գաղտնիքը և չորրորդ առաւօտը, երբ Վահանը գրնաց դէպ ՚ի ծով՝ մայրը՝ որպէս թէ եկեղեցի է գնում, թաք կացաւ դռան ետեւը, և տեսաւ, ինչ, կրիայի միջից

դուրս եկաւ մի աղջիկ, մի սիրուն, մի աննման աղջիկ.
 չուտէս, չխմես, մտիկ անես նրա Հասակ ու կազմին, ե-
 րես ու դէմքին, մարմար ճակատին, կամար ունքերին ու
 թուխ աչքերին. որ նուան Հատի պէս շողշողում էր, ու
 արևի պէս փայլում էր: Մայրը հիացաւ, ապշեց, քար
 կտրեց ու մնաց: Աղջիկ դու աղջիկ, թեւերդ վեր քաշի,
 թոնիրը վառի, կերակուրը եփի, հացը թխի, տունն ալի
 ու խորդի. և երբ այս ամենն արաւ վերջացրեց ու կամե-
 նում էր ժելը (աղբը) դուրս թափել՝ մայրը իսկոյն բռնե-
 ց, բայց նրա դեղեցկութեամբ զմայուած ուշաթափ ե-
 ղաւ, ու, այսօր ես մեռել թէ երեք օր առաջ՝ անշարժ
 վայր ընկաւ: Սիրուն աղջիկը շուտով պաղ ջուր տուեց ե-
 րեսովը, սթափեցրեց ու ասաց.

«Մայրիկ, մայրիկ, խաթուն մայրիկ,
 Թող տուր որ ես հեռանամ,
 Ջատ կըտանջեն ձեզ չար մարդիկ,
 Թող ես պատճառ չդառնամ»:

Մայրը ամենևին մտիկ չարաւ սիրուն աղջկայ խօս-
 քերին և ասաց.

«Սիրուն աղջիկ աննման,
 Ես ճրագով փնտռելիս՝
 Քեզ ցերեկով եմ գտնում.
 Ես մայր լինիմ քեզ
 Իսկ դու՝ ինձ աղջիկ,
 Կեսուր ու հարս մենք լինինք:
 Քեզ կըպսակեմ Վահանիս վերայ,
 Թող քեզնով մինուճար զաւակս խնդայ:

Աղջիկն էլ չկարողացաւ բան խօսել:

Վահանը տուն եկաւ. տեսաւ սիրուն աղջկան. խել-
 քը դիւիցը թռաւ՝ ուշաթափ եղաւ. շուտով սթափեցրին
 նրան. և մի քանի օրից յետոյ Վահանը պսակուեց սի-

րուն աղջկայ հետ, ու խաղաղ սրտով շարունակում էր իր արհեստը:

*
* *

Մի անգամ թագաւորը իր երկու վեզիրներին հետ դէրվիշի հագուստով դուրս եկաւ իր տէրութեան մէջ մանգալու. դէպքն այնպէս բերեց՝ որ ձկնորս Վահանի դռնովն անցկացաւ և անցնելիս՝ իր վեզիրների հետ տեսաւ Վահանի աննման կնոջը: Վեզիրներից մէկը, որին իր չարութեան համար շէյթան վեզիր էին ասում, ասաց.

«Ո՛վ թագաւոր, թագաւոր,
Երկրի իշխող թագաւոր,
Դու չունենաս այդպէս կին,
Ձկնորսն հասնի այս բաղդին:
Այդ լինելու բան է որ.
Առ քեզ այս կինն, թագաւոր:

Թագաւորը պատասխանեց.

«Աստուած, որ ինձ թագ է տուել՝
Ձկնորսին էլ այս է տուել.
Թող որ ես թագովս, իսկ նա կնոջով
Բախտաւոր լինինք՝ Աստուծոյ կամքով:

Չէյթան վեզիրը թագաւորին խելքը մտաւ. ձկնորսի կինը յափշտակելու համար ձկնորսին սպանելու որոգայթներ սկսաւ լարել ու ասաց.

«Ո՛վ տէր թագաւոր, խնդիրս լսիր,
Ձկնորս Վահանին քո մօտը կանչիր,
Ասո՛ր որ գնայ Ղուար-Գանասին,
Իւր մտրուկները հետը միասին,
Բերի քեզ համար. իսկ թէ չի բերել,
Իւր գլխի տէրը նա բնաւ չի լինիլ:
Եթէ որ լինի, Ղուար-Գանասին
Ձկնորս Վահանին տեսնի իւր մօտին՝
Իւր մտրուկներով վրայ կըհասնի,

Նորա մեծ կտորն ականջն կըթողնի.
Իսկ թէ Վահանը դատարկ չետ կըգայ,
Դատ ու դատաստան քեզնից կըստանայ:
Դլուխը՝ գահիճին, մարմինը՝ հողին.
Իսկ նորա կլինը քեզ պահ կըմնայ»:

Միւս վեզերը, որ իր բարութեան համար հրեշտակ
էր ասվում, տեսնելով այս ամեն նենգութիւնները, ասաց.

«Դո՛ւ, երկրաւոր թագաւոր,
Մէկ երկնքին մտիկ տո՛ւր:
Անմեղ արիւն մի թափիլ,
Ձեռքդ արիւնով մի ներկիլ.
Անմեղի տէրն ու պաշտպան՝
Կանէ արդար դատաստան:
Աստուած ու գութ միտդ բեր,
Մի լինիր դու արընտէր.
Դատաստանից վախեցիր,
Չար մտքիցդ հեռացիր.
Ինչ որ ունիս՝ բաւական է,
Խեղճ ձկնորսին խնայիր»:

Թագաւորը սիրտը քարացրել էր, չլսեց բարի վեզի-
րին. կանչեց մի յլսնապետ և հրամայեց ձկնորս Վահա-
նին իր մօտ բերել: Թագաւորի հրամանը կատարուեց և
Վահանին արիւնլուայ կանգնեցրին թագաւորի առաջ:
Թագաւորը ասաց Վահանին.

«Լսել եմ որ դու քաջ տղամարդ ես,
Բայց այն ժամանակ կասեմ թէ քաջ ես՝
Ղուար-Դանասին իւր մտրուկներով
Երբ նանձահարած ինձ մօտ կըբերես:
Գնա՛ քաջի պէս դու բաղդդ փորձիր,
Փորձութեան մէջը անուն վաստակիր.
Վայ, թէ որ դատարկ չետ ես դարձել դու,
Դլուխդ քոնը չէ, լաւ իմացիր դու»:

Թէէ վաՀանը չգիտէր որտեղ է Ղուար-Գանասին,
ինչ է նա, ինչպէս պէտք է բերել, բայց կեանքը քաղցր
է. վաՀանը լանձն առաւ գնալ, և տըտում տխուր վե-
րադարձաւ տուն: Երբ կինը տխրութեան պատճառն ի-
մացաւ՝ սիրտ տուեց վաՀանին և ասաց.

«Մի տխրիլ, վաՀան, սիրելի վաՀան,
Տխրութեան ցաւը դու սրտիցդ հան.
Այդ դեռ սկիզբն է նեղութիւնների,
Հատ նեղութիւններ դեռ նոր պէտք է գան.
Քո խաթուն մօրը ես վաղ ասացի,
Որ ինձնից վնաս ձեզ միշտ կըՀասնի.
Բայց նա չսեց ու ինձ պինդ բռնեց
Ու վերջը քեզ Հետ ամուսնացրեց»:

Ասաց ու իր մատանին տուեց վաՀանին և աւելցրեց.
Ղուար-Գանասին է մի մատակ ձի, որ քառասուն տըմուղ
մտրուկ ունի. և որովհետև նրանք բոլորն էլ վայրենի են՝
այս պատճառով էլ ասվում են Ղուար-Գանասի՝ որ կընը-
շանակէ առապարի մողի կամ վայրենի արջառ: Ղուար-
Գանասու կաթով ու որ լողանայ՝ տասնէՀինգ տարեկան
կըդառնայ, բայց դժուարը կթելն է. այդ էլ մի ուրիշ
փորձանք պիտի լինի քեզ Համար, բայց փորձանքի մէջ
փորձողը պիտի ընկնի: Ղուար-Գանասին ձեռք բերելու
Համար պէտք է առաջ շշմեցնել. ուրեմն զնա թագաւո-
րից մի ջորեբեռ քացախ՝ և մի իշաբեռ աղ առ. մատա-
նին դիր մատդ, ցուքը ուր առաջնորդի՝ զնա. մատանու
ցուքը որ աղբիւրի մէջ ընկնի՝ մօտին կըտեսնես Ղուար-
Գանասու թամբն ու սանձը. կառնես այդ բաները. աղբիւ-
րի միջի ջուրը, ցեխն ու աւազը մաքուր կըդատարկես, կիս-
տակես, աղն ու քացախը կըլցնես աղբիւրի մէջ և դու
թամբն ու սանձը առած կըբարձրանաս աղբիւրի մօտին
եղած սօսի (չինարի) ծառի վրայ: Ղուար-Գանասին ա-
ռաջին անգամ կըգայ, աղբիւրի չորս կողմովը կըպտըտի,

բայց ջուր չի խմիլ, ձայն ծպտուն չես հանիլ. երկրորդ անգամին նոյնպէս կըգայ ու դարձեալ ջուր չի խմիլ, դարձեալ ձայն չես հանիլ, իսկ երրորդ անգամին կըգայ իր մտրուկներով ու կըսկսի ջուր խմել. կըխմի քացախը ու կըշշմի և թէ քաջ ես՝ կըթամբես ու կըհեծնես և նպատակիդ կըհասնես:

Վահանը արեց՝ ինչ որ ասել էր իր կինը. երեսուն ինն օր ճանապարհ գնաց մատանու առաջնորդութեամբ, քառասուներորդ օրը հասաւ աղբիւրին. արեց ինչ որ ասել էր իր կինը, և բարձրացաւ մօտիկ սօսի վրայ: Կէսօրուայ մօտ էր. դղրդոցն ընկաւ երկիրը. երկինք գետինք մթնեց. ինչպէս կասեն՝ մէրը մանուկն ուրացաւ. Ղուար-Գանասին եկաւ՝ իր մտրուկներին բաւական հեռու թողնելով՝ ինքն աղբիւրի չորս կողմը պտըտեց՝ ու գնաց, դարձեալ եկաւ և էլի պտտեց ու գնաց. Վահանի թուքը կատիկն էր թռել վախից և ուռի տերևի պէս դողում էր. երրորդ անգամին եկաւ Ղուար-Գանասին իր մտրուկներով ու սկսեց ջուր խմել, բայց ով կըտար ջուր. խմածը քացախ էր. խմեց ու շշմեց: Քեզ տեսնեմ, Վահան, իջիր, թամբելն ու սանձելը և վերան նստելը մին արան, ու, թագաւորի քաղաքը ուր ես, արի մի ժամում: Վահանը Ղուար-Գանասին իր մտրուկներով տարաւ արեց թագաւորական այգին ու եկաւ թագաւորի մօտ, երեք անգամ գլուխ տուեց, ասաց. «Թագաւորն անպրած կենայ, Ղուար-Գանասին իր մտրուկներով արդէն թագաւորական այգումն է. հրամանդ կատարուած է»:

Թագաւորը թէև ուրախ չէր, որ ձկնորս Վահանին կրկին կենդանի տեսաւ. նա ուրախ կըլինէր նրան կորած կամ մեռած տեսնել, բայց ուրախ ձեւացաւ և դեռ ընծայ էլ տուեց, ու ճանապարհ դրեց: Վահանը ուրախ ուրախ տուն եկաւ, պատմեց բոլորը իր մօրն ու կնոջը. նրանք էլ շատ ուրախացան Վահանի անվտանգ ու յաջող

վերադարձի համար. Աստուծուց զոհ եղան և մատաղ արին ու աղքատներին բաժանեցին: Վաճանք դարձեալ սկսեց իր ձկնորսութեան արհեստը շարունակել:

Թագաւորը տրտնոմ տխուր կանչեց շէյթան վեզիրին ու ասաց.

«Ձկնորս Վաճանք Ղուար-Գանասին
Եւ մտրուկները հետը միասին՝
Բերեց, ով վեզիր, ասա՛, ինչ անենք,
Որ այդ ձկնորսին մի կերպ կորցնենք,
Նորա հրաշալի, աննման կինը ձեռքիցը խլենք»:

Վեզիրը պատասխանեց. «Թագաւորն ապրած կենայ, ձկնորսին ուղարկիր, թող գնայ և հարաւային թագաւորի աղջիկը քեզ կին բերի»: Թագաւորը լսեց վեզիրին և յիսնապետին ուղարկելով Վաճանին էլի իր մօտ բերել տուեց ու ասաց.

«Տեսայ թէ դու լաւ, քաջ տղամարդ ես,
Բայց ես քեզ կասեմ, որ դու զիւցազն ես՝
Թէ հարաւային քաջ թագաւորի
Աննման աղջիկն ինձ կին կըբերես:
Դէ, գնա՛ ուրեմն, թող Աստուած քեզ հետ
Ուղեկից լինի, պահապան ու դէտ:

Ձկնորս Վաճանք լսել էր, որ հարաւային թագաւորը մի խիստ և կամակոր մարդ էր, ու իր աղջիկը ուղղուններին անխնայ կոտորում էր, ուստի և տրտնոմ, յուսահատ եկաւ տուն և պատմեց թագաւորի հրամանը: Կինը դարձեալ յուսադրեց ու ասաց. «Քեզ միայն հարաւային թագաւորի խստութիւնն է յայտնի. բայց չգիտես թէ ճանապարհին ինչ մարդիկների պիտի հանդիպիս, որոնք քեզ պատառ-պատառ կանեն, եթէ նրանց սիրտը չքաղցրանես. բայց եթէ կարողացար շահել նրանց, այն ժա-

մանակ Հէնց նրանք քեզ կօգնեն Հարաւային թագաւորի աղջիկը անվտանգ բերելու: Բայց դու, գնա այժմ թագաւորից խնդրիր ութսուն ոչխար, մի հովիւ և նրա դռան սև շունը. այդ բոլորը կառնես՝ ճանապարհ կրնկնես: Քեզ կրպատահի մի մարդ՝ որ ճոպան կոլորի և ճոպանը ոլորելիս Մասսի պէս սարերը տեղից կըշարժի. նրան կրնկերացնես. մի գիշեր նրա մօտը կըմնաս. տասը ոչխար կուտէք, դմակները շանը կրտաս, շունը կուտի և իշի չափ կրդառնայ, և առաւօտը շուտով ճոպան ոլորողին հետդ առած կըշարունակես ճանապարհդ: Ձեզ կրպատահի մի ջրաղացական՝ որ եօթն աչք ջրաղացի ալիւրը միայնակ կուտի ու կրգոռայ՝ «վայ սոված մեռանց». մի գիշեր էլ նրա մօտ կըմնաս. տասն ոչխար էլ այնտեղ կուտէք, դրմակները շանը կրտաս, շունը կուտի և կրդառնայ եղան չափ. և ջրաղացականին էլ ընկերացնելով առաւօտը կըշարունակես ճանապարհդ: Կըհանգիսի քեզ մի ծով և ծովի վրայ նստած մի մարդ՝ որ մի կողմից ծովի ջուրը կուկրտայ ու կրգոռայ «վայ ծարաւ մեռանց»: Մի գիշեր էլ նրա մօտ կըմնաս. տասն ոչխար էլ այնտեղ կուտէք, դրմակները շանը կրտաս, շունը կուտի, կրդառնայ դոմշի չափ. առաւօտը ճանապարհդ կըշարունակես: Քեզ կրպատահի մի մարդ, որ մի տախտակի վրայ կըթըխթըխկացնի ու աննկատելի կերպով իր ուղած բաները կրտեղափոխի ուղած տեղը՝ առանց ձեռք դիպցնելու. մի գիշեր էլ այնտեղ կըմնաս. տասը ոչխար էլ այնտեղ կուտէք, դրմակները շանը կրտաս, շունը կուտի, կրդառնայ փղի չափ. առաւօտը շուտով ճանապարհդ կըշարունակես: Իրիկնապահին կըհասնես Հարաւային թագաւորի քաղաքը և կերթաս ընկերներովդ խնամաքարի վրայ կընստես. թագաւորը կրկամենայ ձեզ ծեծելով դուրս անել, իսկ դու կասես. ինչո՞ւ ես ծեծում, հրամայիր ինչ որ կամենում ես. եթէ կարողացանք կատարել՝ լաւ, աղջիկդ կրտաս կրտա-

նենք մեր թագաւորին, իսկ եթէ չկարողացանք՝ այն ժամանակ գլուխներս կտրիր:

Թագաւորը ինչ գփուար բան էլ հրամայի՛ր քո ընկերները կրկատարեն և թագաւորի աղջիկը կըբերէք. ուրեմն գնա՛, պատրաստուի՛ր ու ճանապարհ ընկիր. Աստուած քեզ հետ. Քրիստոսի խաչը, Լուսաւորչի աջը քեզ պահապան:

Վահանը ինչ որ հարկաւոր էր՝ ստացաւ թագաւորից, մօրն ու կնոջը մնաք բարով ասաց ու ճանապարհ ընկաւ.

Մայրը՝ լալով

Կինը՝ յոյս տալով՝

Ճանապարհ գրին

Խեղճուկ Վահանին:

Վահանը յոյսը մօր աղօթքի ու կնոջ սիրոյ վրայ դրած, Աստուած ապաւինելով՝ շարունակեց ճանապարհը, և, շատ գնաց, քիչ գնաց, շատ ու քիչն Աստուած գիտէ, գնաց հասաւ ճոպան ուրորդին ու ասաց.

«Բարով քեզ, Ճոպան ուրորդ եղբայր.

—Մէջ բարին բարով, անցորդ եղբայր, որտեղից ես գալիս և ո՛ւր ես գնում. օձն իր պորտով, հաւքն իր թեւով այստեղ չէր հասել, դու լինչպէս հասար՝

—Քո սէրն է բերել, Ճոպան ուրորդ եղբայր.

—Սիրով կեանաս. ինձ էլ ընկեր չե՞ս ընդունիլ.

—Ինչո՞ւ չէ, ընկերն Աստուծունն է. երկու չլինինք, երեք լինինք. և այն գիշերը Վահանը, հովիւր և Ճոպան ուրորդը տասը ոչխար մորթեցին կերան, լաւ ուրախութիւն արին. Վահանը դմակներն էլ սև շանը տուեց և առաւօտը շուտով ճանապարհ ընկաւ հովուի ու Ճոպան ուրորդի հետ. և հետզհետէ պատահեցին Ջրադացպանը, Ջուր կուլտուողն ու Տմբլաչին. ամեն մէկին պատահելիս մի և նոյն ձևով հարց ու բարև եղաւ, մի-մի գիշեր մօտ-

ները մնաց, տասը տասը ոչխարներ կերան, դմակները սև շանը տուեց, բոլորին էլ հետն ընկերացրեց և այսպէս հասաւ հարաւային թագաւորի քաղաքը:

Վահանն ու իր ընկերները գնացին նստեցին հարաւային թագաւորի դռան խնամաքարի վրայ: Հարաւային թագաւորը իմացաւ թէ ինչի՞նք են եկել և հրամայեց ծածելով դուրս անել. այն ժամանակ Վահանը ասաց թագաւորին.

«Դեսպանը որ կայ՝ իրաւունք ունի
Իւր ուղարկողի միտքը յայտնելու.
Ոչ մի թագաւոր իրաւունք չունի
Դեսպանի պատուին, անձին դիպչելու:
Դեսպան եմ եկած ես խնամախօս,
Կամ տուր աղջիկդ անձայն ու անխօս՝
Մեր թագաւորի կամքը կատարիր,
Առանց պայմանի բարեկամ եղիր,

Կամ ինչ կուգես դու՝ առաջարկիր մեզ,

Թէ չկատարենք՝ գլուխներս քեզ:

Թագաւորը բարկացաւ, հրամայեց իր տէրութեան մէջ 15 տարեկանից մինչև յիսուն տարեկան մարդկանց ժողովել պատերազմ անել: Թագաւորի հրամանը կատարուեց: Ճոպան ոլորողն ասաց.

Օխխայ. եղբայրներ, դուք հեռի կացէք,
Ինչ որ ես կանեմ՝ հեռուից դուք տեսէք.

Ճոպան կոլորեմ, սարեր կըշարժեմ,

Բոլոր զօրքերին՝ տակովը կանեմ.

Ասաց ու արեց. փոշին աշխարհը բռնեց. զօրքի հետքը չմնաց և մարդ չազատուեց. ժողովուրդը սկսեց անէծք կարդալ թագաւորին, որ մի աղջկայ համար աշխարհը քանդեց: Թագաւորը չգիշաւ, երկրորդ պայման առաջարկեց. և հրամայեց՝ մի օրուայ ճանապարհ երկայնութեամբ չորս կարգ կերակուրի կաթսաներ շարել. եթէ

կուտեն՝ լաւ, աղջիկս կըտանեն, ասաց, իսկ թէ չեն ուտիլ, գլուխները կըթռչի դահճի թրով. թագաւորի հրամանը կատարուեց: Վահանն ու իր ընկերները իմացան թագաւորի առաջարկութիւնը և ջաղացական ասաց.

««Յիսայ. եղբայրներ, դուք հեռու կացէք,

Ինչ որ ես կանեմ, հեռուից դուք տեսէք.

Ձեռնոց կըդնեմ, բերանս կըբանամ,

Թէ կուգէք՝ կաթսաներն էլ հետը կուլ կըտամ:

Ասաց ու արեց. սկսեց մի ծայրից ուտել, մի կողմից գոռալ. «վայ, սոված մեռայ»: Վերջին կաթսայի կերակուկուրը ամանով կուլ տուեց ու ասաց. «էլ չկայ»:

Ժողովուրդը և թագաւորը ապշած մնացին, և թագաւորն ասաց. «Խօսքս խօսք է: Աղջիկս տալիս եմ. բայց որովհետեւ դուք ճանապարհից նոր էք եկած և փոշոտ կըլինիք, լաւ կանէք բաղնիք գնաք և հարսանիքի ուրախութիւնից առաջ մաքրուելով արժանաւոր կերպով և հանդերձով հարսանիքին մասնակցէք իբրեւ խնամախօս դեսպաններ. Վահանը յօժարուեց. և թագաւորը հրամայեց բաղնիքը կարմրացնել, որ մէջը մտնեն թէ չէ, տապակուին. թագաւորի հրամանը կատարուեց: Վահանը և իր ընկերները իմացան խարդաւանանքը, բայց Ջուր կուլտուողն առաջ ընկաւ ու ասաց.

Այդ էլ իմ բանն է, սիրելի եղբարք.

Գնանք բաղանիք, չերեւանք անկարգ.

Բերանս կըբանամ, որձկալ կըսկսեմ

Եւ բաղանիքը սառնատուն կանեմ:

Ասաց ու արեց. երբ բաղանիքի դռանը հասան, Ջուր կուլտուողը որձկաց. ջուրը գետի պէս բաղանիքը լցուեց, բաղանիքը սառեց. Վահանը և իր ընկերները սկսեցին զանգատել՝ որ բաղանիքը պաղ է: Բաղանիքից լետոյ թագաւորը Վահանին ու նրա ընկերներին ճաշի հրաւիրեց. և ծածուկ հրամայեց որ Վահանին ու նրա ընկերներին

Թունաւորած կերակուր տան. կատարուեց Թագաւորի հը-
րամանը. Վահանը և ընկերները իմացան խարդաւանան-
քը. Տմբըլ անողը առաջ ընկաւ ու ասաց.

Դուք, եղբայրներ, հոգս մի՛ անէք,

Դնացէք ու հանգիստ նստեցէք.

Կըտմբըլցնեմ, և իրանք իրանց

Մեր ամանները Թագաւորին կընկնեն:

Ասաց ու արեց: Երբ հացի նստեցին Տմբըլչին տախ-
տակը տմբըլցրեց՝ ամանները Թագաւորի ամանների հետ
փոխուեցին. երբ սկսեցին ուտել՝ Վահանը ոտի կանգնեց
ու ասաց.

Ձեմ կամենում որ մեր այս խնջոյքին,

Մեր Թագաւորի այս հարսանիքին՝

Ոչ մի աչքերից՝ արտասուք Թափի

Եւ ոչ ոք ողբի, սուգի ձայն լսի.

Ո՛վ Թագաւոր քաջ, հացիդ մի՛ դիպչիլ,

Դու մեզ կամեցար, բայց մենք չենք կամիլ,

Որ Թունաւորուես քո տանդ միջին.

Առաջդ դրած կերակուրները

Մեր համար պատրաստած Թունաւորներն են:

Թագաւորի ամաններն էլ փոխուեցին և խնջոյքը
անցաւ շատ ուրախ ու զուարթ: Վահանը առաւ Թագա-
ւորի աղջիկն ու վերադարձաւ. Տմբըլչուն Թողեց իր տե-
ղը, տասը ոչխար կերան, ուրախութիւն արին դմակները
տուին սև շանը. Ջուր կուտուողին, Ջաղացականին ու Ճո-
պան ոլորողին էլ Թողեց ամենքին իրանց տեղը, ամեն
մէկի մօտ մի-մի դիշեր մնաց և տասը տասը ոչխար մոր-
թեց, ուրախութիւն արին ու տուն վերադարձան: Վա-
հանը հարաւային Թագաւորի աղջիկը տարաւ իր Թագա-
ւորի մօտ ու ասաց. «Թագաւորն ապրած կենայ, բերեցի
հարաւային Թագաւորի աղջիկը և ահա: Թագաւորը, որ
աւելի ուրախ կըլինէր Վահանին մեռած տեսնել, ուրախ

ձեացաւ և նրան մի լաւ ընծայ տուեց ու տուն ուղարկեց:

Հա, մոռացայ ասել. Հարաւային թագաւորի աղջկայ զբանը չորս առիւծ էին կապած և թագաւորը հրամայեց Վահանին ու նրա ընկերներին զնալ աղջիկը տանել. բայց հրամայեց որ առիւծներին բաց թողնեն. Վահանը և իր ընկերները իմացան թագաւորի խարդաւանանքը. հովիւր առաջ եկաւ ու ասաց.

Գուք, եղբայրներ անհոգ կացէք,

Ինչ որ կըլինի հեռուից տեսէք.

Չունս կարճակեմ, և հարայ կըտամ.

Եւ առիւծները կընկնեն անկենդան:

Ասաց ու արեց. Սև-Չունը տեսաւ առիւծներին, առիւծ դարձաւ և չորս առիւծներին էլ պատառ-պատառ արեց. այսպէս, ինչ երկարացնեմ՝ գլուխդ ցաւացնեմ, Վահանը Հարաւային թագաւորի բոլոր որդեայթները փշրելով՝ նրա աղջիկը բերեց իր թագաւորին:

Վահանը երբ տուն վերադարձաւ, հովիւն ու Սև-Չունը այնպէս մտերմացել էին նրան՝ որ չկամեցան նրանից բաժանուել. և Վահանը մտաւ իրանց տուն իր երկու ուղեկիցներով: Մայրն ու կինը տեսնելով Վահանին՝ ուրախութիւնից իրանց կորցրին. շատ ուրախացան և շատ խնդացին. երբ մի փոքր հանգարտուեցին՝ նոր տեսան հովուին ու Սև Չանը: Վահանը ասաց նրանց թէ՝ ուվքեր են նրանք. հովիւն ու Չունը՝ ի պատիւ Վահանի՝ սիրով ընդունուեցին: Վահանը հովուի գործակցութեամբ սկսեց իր ձկնորսութեան արհեստը շարունակել, իսկ Սև Չունը հըսկում ու պահպանում էր տունը:

* *

Չէյթան վեզիւրը դարձեալ եկաւ թագաւորի մօտ ու ասաց. «Թագաւոր, Հարաւային թագաւորի աղջիկը սիրուն է, բայց աննման չէ. լրման լուսին է, բայց արեգակ չէ:

Սիրուն, աննման, պայծառ արեղակ՝ ձկնորս Վահանի կինն է։ Ուղարկիր ձկնորս Վահանին Ղուար-Գանասուն կթելու, որ մէջը լողանաս՝ տասնեւհինգ տարեկան դառնաս։ Եթէ լինի՝ որ ձկնորս Վահանը կարողանայ կթել՝ այն է կաթի մէջ կըլողանաս և պատանի կը դառնաս. իսկ եթէ չի յանձն առնիլ՝ գլուխը կըկտրես։ Ղուար-Գանասուն կըթելը հեշտ չէ. ով համարձակուի մօտենալ և կթել աշխատել՝ ինքն ու իր քառասուն մտրուկներով վրայ կըթափեն և մեծ կտորը ականջը կըթողնեն. այսպէս թէ այնպէս՝ գու. կորուստ չունիս. կամ կըմանկանաս կամ ձկնորսի կինը կառնես։ Թագաւորը համոզուեց ու ձկնորս Վահանին կանչելով ասաց.

Վահան, սիրելիս, ինչ օգուտ որ
Նորահաս կին առայ և եմ թագաւոր:
Քանի որ ծեր եմ, օրերս անցրած՝
Անօգուտ ջանք եղան քո բոլոր արած.
Ղուար-Գանասուն գնա՛ կթի բեր
Մէջը լողանա՛ պատանի դառնամ,
Նոր նշանածիս վայելեմ ես սէր,
Նոր օր, նոր տարի նոր կեանք ստանամ.
Գնա՛, եթէ ոչ՝ պատրաստ է դահիճ
Գլուխդ կտրել, տալ քեզ հող մահիճ:

Թագաւորը հրամայեց քառասուն ունկնանի կաթսան պատրաստել, որ մէջը Ղուար-Գանասուն կաթով լողանայ՝ պատանի դառնայ։ Վահանը տխուր տուն եկաւ և կնոջը պատմեց նոր պատրաստուած փորձանքը. կինը յուսադրեց ու ասաց. մատանիս կըդնես մատդ. կըգնաս դէպի թագաւորական այգին, մի կերպ այգին կըմտնես և կաշխատես արևի ճառագայթները մատանու ակի մէջ ձգել և ական ցլքը՝ Ղուար-Գանասուն աչքին. երբ այդ յաջողի քեզ՝ Ղուար-Գանասին զմայի, անզգայութեան մէջ կընկնի. նոյն դրութեան մէջ կընկնեն և նրա մտրուկները.

կրկնէս կաթը, կըլցնես քառասուն ունկնանի կաթսայի մէջ. առաջ թագաւորը կըմտնի լողանալու. նա իսկոյն քար կըգառնայ, իսկոյն դու կըմտնես լողալու. կըլողանաս՝ և տասնէկինգ տարեկան պատանի կըգառնաս: Անուհետեւ քո խմաստութեանը կըմնայ քո բաղդը կարգի դնել:

Վահանը արեց՝ ինչ որ ասել էր իր կինը: Թագաւորը լողացաւ և քար դարձաւ, իսկ ինքը լողացաւ՝ պատանի դարձաւ: Հէյթան վեղիւրը կարծեց թէ քար դարձողը Վահանն էր ու պատանի դարձողը՝ թագաւորը, հազցրեց Վահանին թագաւորական զգեստներն ու ասաց.

Ահա, թագաւոր, պատանի դարձար,
Ձկնորս Վահանը դարձաւ կլոր քար.
Վայելիւր կինը ձկնորս Վահանի,
Իսկ նոր բերածդ՝ վեղիւրիդ լինի:

Արեւն արեւին՝ քաջ թագաւորին,

Լուսինն լուսնակին՝ իւր քաջ վեղիւրին.

Արեւն արեւով՝ լուսին լուսնակով՝ թող ուրախ լինին,

Բոլորը միասին:

Լաւ՝ ասաց թագաւոր դարձած Վահանը. ինչ որ դու փրթում էիր ձկնորս Վահանի համար, նրան արժանի չհամարելով իր ունեցած կնոջը, այն էլ կըխրթես. որովհետեւ դու քո չարութեամբ արժանի չես ոչ հարաւային թագաւորի աղջկան և ոչ էլ Վահանի. Աննաման կնոջը տեսնելու: «Ինչ կըփրթես՝ էն կըխրթես». մեռիւր անիրաւ, թող աշխարհը հանդստանայ քո նենդութիւններից. դահիճը կտրեց շէյթան վեղիւրի գլուխը, մարմինը եօթն օր հրապարակում մնաց և անցորդները գլուխները շարժում էին ու ասում. «Չար էր, իր չարութեամբ կորաւ»:

Վահանը զնաց պալատ, այնտեղ փոխադրեց իր կինն ու մայրը. հովիւին կարգեց իր պալատի պահապան և պալատական նախարար. շունը իր պալատի դռան մօտ

կապեց և հրամայեց օրը մի դմակ տալ. կանչեց Ճոսպան ուղորդին, Զուր կուլտուողին, Զրաղացականին ու Տմբըլ անողին, նրանց թռչակ կապեց և պատուով պահում էր: Բարի վեզիրին, որ երեսից ընկած էր, իր երկրորդը կարգեց: Հարաւային թաղաւորի աղջկանն էլ պատուով իր հօր մօտն ուղարկեց. ու. նորից պսակուելով իր Աննման կնոջ հետ՝ եօթն օր, եօթը գիշեր հարսանիք արեց. նրանք հասան իրանց նպատակին, դուք էլ հասնէք ձեր նպատակին: Աստուծուց երեք խնձոր իջաւ. մէկն ասողին մէկը լսողին. մէկն էլ ականջ դնողին:

Վահանը իւր թագաւորութիւնը վարելիս, յաճախ կրկնում էր հօր վերջին խօսքը. միայն մի բանը փոխում էր, փոխանակ ասելու «Հօրդ արհեստը շարունակիր», ասում էր. «Բոլոր արհեստները սիրիր»: Վահանը քանի միտն էր քերում իր հօրն ու ձկնորսութիւնը, ասում էր:

Վահան, որդիս, ես մեռնում եմ,
Ե՛կ, քեզ կտակս աւանդեմ.
Հօրդ արհեստը շարունակիր,
Մօրդ պահիր ու պահպանիր,
Առաքինի, սուրբ կեանք վարիր.
Մի՛ ծուլանար, սուտ մի՛ խօսիր,
Աստուած չիշէր, դործ կատարիր,
Արհեստիդ միշտ զսՀ եղիր:
Ինչպէս որ ինձ՝ Աստուած քեզ էլ
Իւր գթութիւնն չի խնայել:

Հ Ա Ս Օ



ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

(Հայոց Պատմութիւնից)

ՀԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ ԵՒ ԶԻՆՈՒՈՐԻ ՊԱՐՏՔ



Բ.

այոց բանակը միւս օրը սաստիկ ճեպով խաղում էր դէպի Արտաշատ: Զինուորների դէմքերը ուրախ էին, խօսակցութիւնները զուարթ: Բանակի առաջ ձիարշաւում էին իշխանները, որոնք շուտ-շուտ յետ էին նայում և շտապեցնում էին զօրքը: Քալները հետզհետէ աւելի և աւելի արագանում էին. բոլորը ջանք էին դրժում որքան կարելի է շատ ճանապարհ կտրել: Ի՞նչ կար:

Ազրվշնասպը երկու յուզաներից լսելով հայ նախարարներին խորհուրդը, երդումը, և վախենալով թէ մի գուցէ լուսաբացին իր վրանը Հայոց սուսերամերկ զինուորներով շրջապատած տեսնէ, կտրել էր գիշերուայ քունը և միջնով վախել էր ուրացեալ հայ նախարարներով շրջապատուած: Ահա նրանց էր հետամուտ լինում հայ հեծելազօրքը: Տարածութիւնը, որ բաժանում էր փախստականներին հետապնդողներից, աւելի և աւելի կարճանում էր: Փախչողներն ապաւինել էին ծուռ ու մուռ ճանապարհներին, բայց շուտով տեսան որ այդ յոյան էլ խաբուսիկ է. Հրահատ կամարալանը ձիու ականջը մտած իր քաջ մարդկանց հետ թռչում էր զանաւանքներով և խոր խոր ձորերի մօտերքով: Այդ ժամանակ փախչողներից մէկի ձին սկսեց յետ մնալ, տանջուած կենդանին յոգնած էր և ու-

շաղրուլթիւն չէր դարձնում իր տիրոջ անխնայ հարուածներին: Կամսարականը հեռուից ճանաչեց նրան և սաստիկ խթելով իր ձիու կողերը, հարկադրեց նրան աւելի ևս արագ սլանալ: Կարճ միջոցում նա բռնած ունէր յետամնացին:

— Դաւաճան, գոչեց նա ահեղ ձայնով, — ահա գտար փառքիդ պսակը:

Կալանաւորը Գլիշոյ Խորխոռունին էր, որ ուրացեալներից մէկն էր և շատ չարիք էր հասցրել հայերին իր բանսարկութիւններով: Մի ականթարթում նրան շրջապատեցին հայ զինուորները:

Առջևից փախչողները տեսնելով, որ այլ ևս հալածողներ չկան, իջան ձիաներից, որ խեղճ կենդանիներին ոյժ տան դժուար ճանապարհը շարունակելու: Սակայն Բաբգէն Սիւնին թողնելով Հրահատին իր դերու հետ հաշիւ տեսնել, շարունակեց հետախուզութիւնը և վրայ հասնելով, սարսափելի իրարանցում գցեց փախստականների խմբի մէջ: Այդտեղ էլ մի քանի մարդիկ բռնուեցան: Իսկ Ադրվշնասպը կարողացաւ շատերի հետ փակուել Արտաշատի բերդում:

Հայ բանակը չուեց դէպի Գուին:

Քաղաքը զարմացած մնաց, տեսնելով գերի իշխաններին, որոնցից մինչև այդ օրը դողում էր իւրաքանչիւր հայ: Մինչդեռ Վահանի մարդիկը բացատրում էին եղելութիւնը, Հրահատը աշտանակեց ձին դէպի այն տունը, ուր թողել էր իր կնոջը Աղուանից կողմերը գնալուց առաջ: Նա գտաւ այդ տունը սուգի տխրութեամբ պատած: Արի տղամարդը համարեա հասկացաւ, թէ ինչ էր պատահել և ձիու սանձը գցելով ծառային, սենեակն ընկաւ: Այդտեղ տեսաւ Զարուհի տիկնոջը մի փոքրիկ դադաղի առաջ, հերարձակ սևերով պատած: Տիկինը սկսեց բարձրաձայն ողբալ իր Խորէնին, իր այն փոքրիկ հրեշտակին,

որին տեսանք հիւանդ ընկած անկողնում: Հայրն ընկաւ գագաղի վրայ, երեսը դրաւ երեսալի սառն դէմքի վրայ և այդտեղ խլացրեց իր հեկեկանքը: Չատ կարճ միջոցում հաւաքուեցան աղգական ու բարեկամ: Ամենքի լաց ու կոծը անմխիթար էր:

—Ահ, որդիս, հրեշտակս... ահ, խորէնս, դու էիր ինձ թեւ տալիս օտար երկրում. քո աստղն էր ինձ առաջնորդում, քեզ համար էի պահում կեանքս, այլ ևս ինչ կեանք մնաց... դնամ, ես էլ մեռնեմ...

Այսպէս էր ասում Հրահատը և թեւերը տարածած խորէնի դիակի վրայ, համբուրում էր նրա դէմքը: Բարեկամները և նոյն իսկ Կամսարական տիկիներ մի կերպ կարողացան յետ տանել սրտամորմոք հօրը: Բայց նա էլի լաց էր լինում. ցաւը այնքան սաստիկ էր, որ նա մոռացել էր ամենքին, մինչև անգամ իր սիրելի ամուսնուն: Թէև երկար ժամանակ օտարութիւն էր քաշել, բայց ոչ ոքին մի սառն բարև անգամ չասաց:

Երկու ժամ գեռ չէր անցել Հրահատի գալուց, մի ձիաւոր ղինուոր կանգնեց տան դռան մօտ և ասաց որ կամենում է իշխանին տեսնել: Սա իսկոյն դուրս գնաց:

—Ի՞նչ կայ, Մուշեղ, հարցրեց նա ծանր, վշտահար ձայնով:

—Սպարապետն ուղարկեց ձեզ յայտնելու, որ իսկոյն արշաւում ենք Արտաշատի վրայ: Գուք պիտի վարէք յառաջախաղ խումբը:

—Բայց լսե՛լ են տանս մէջ եղած սուգը, շարունակեց իր հարցմունքը իշխանը:

—Բարթողիմէոս հայր սուրբը պատմեց ամենքին: Սպարապետը շատ տխրեց, ափսոսաց որ ժամանակ չունի անձամբ գալ մխիթարել Կամսարական տիկնոջը, այլ հրամայեց ինձ շտապել, յայտնել ձեզ այն, ինչ որ արդէն ասացի:

—Թող սպասեն, իսկոյն կըգամ, պատասխանեց իշ-

խանը և յետ դարձաւ. հրամայեց ծառային մի ուրիշ ձի պատրաստել իր համար: Ապա մտաւ սենեակը, ուր լալկանները կրկին սուգ էին սկսել: Իշխանի հրամանով լացը դադարեց. նա դարձաւ գէպի իր կինը արտասուալից աչքերով:

—Թաղիր Խորէնին, Զարուհի, իսկ ես գնում եմ, ընկերներս ինձ են սպասում:

—Միթէ՞ գնում ես, ճչաց տիկինը—անդ է քո սէրը մեր անբախտ զաւակի վրայ:

—Դու դեռ չդիտես թէ ինչ կայ, պատասխանեց հրահատը, աշխատելով խօսել մի հանդարտ ու համոզեցուցիչ ձայնով, որ սիրտ տար իրան էլ, կնոջն էլ,—եթէ չլինէր մեր զաւակի այս սուգը, անշուշտ կիմանայիր թէ Չիրակայ տէրերը ինչ են սկսել և դուցէ այն ժամանակ իբրեւ մի հարազատ զաւակ հայրենի եկեղեցու, դու ինքդ կրպակէիր ձիուս սանձը և կըպատուիրէիր քաջ լինել, պատերազմել իբրեւ հասարակ զինուոր:

—Բայց ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, հարցրեց տիկինը անսովոր հետաքրքրութեամբ: Երևում էր, որ Զարուհին դուրի չէր իր ամուսնու պատերազմական ոգևորութիւնից:

—Հեռու կըտանէր ինձ մի առ մի պատմելը. սպարապետը երկար սպասել չէ կարող... գնամ...

—Ո՞վ է սպարապետը, դարձեալ հարցրեց տիկինը, չբաւականանալով հրահատի կտրուկ պատասխանով:

Բայց նա չլսեց այդ հարցի պատասխանը: Իշխանը կրկին ընկաւ դադաղի վրայ, համբոյրներ թափեց անշունչ ու անզգայ դէմքի վրայ:

—Թաղիր Խորէնին, Զարուհի. վերջին անգամ իմ փոխարէն մի աւելորդ համբոյր ևս տուր նրան, ասաց դժբախտ հայրը և աչքերը սրբելով այնպէս շտապով դուրս գնաց, որ տան մէջ հաւաքուածներին ոչ ոք ոչինչ չհասկացաւ:

Բանակը չուէլ էր: Իշխանը քշեց իր երեւարը, որը շուտով շնչասպառ հասցրեց նրան ղինուորների երկաջն շարքին: Միւս իշխանները շտապեցին մխիթարել որդեկութոյս հօրը, իսկ Ներսէհ և Արշաւիր Կամսարականները լաց եղան իրանց եղբօր դժբախտութեան վրայ: Ապա Հրահատը անցաւ յառաջապահ ղինուորների գլուխը:

Ջօրքը պաշարեց Արտաշատը, բայց իղուր: Ադրվըշնասպն իր արբանակների հետ փախաւ դէպի Ատրպատական:

Մի քանի օրում Հայաստանի մէջ Համարեա ամենքն իմացան Վահանի այդ գործերը: Ջատեքն ուրախացան, իսկ փառամոլ նախարարները ծաղրում էին այդ ձեռնարկութիւնը: «Ուրացող տարօնեցին չափազանց լանդուզն է, ուզում է հրաշք գործել, ասում էին նախարարները իրանց ժողովրդին.—բայց այդ լանդուզութեան վերջը ծաղրելի կըլինի. պարսիկների համար ոչինչ բան է կլանել նրան իր չորս հարիւր ապստամբների հետ»:

Սակայն Վահան Մամիկոնեանը կլանվելուց չէր վախում: Իր բոլոր յոյսը դնելով Աստուծու վրայ, նա գնաց Յովհան Մանգալուհու մօտ, որ այդ ժամանակուայ կաթողիկոսն էր: Արեգարդ հայրապետը, Սահակի և Մեսրոպի յառաջագէմ աշակերտը, ուրախութիւնից դողալով օրհնեց սպարապետին և նրա զօրքը, յորդորեց կիսատ չթողնել սկսած գործը: Ժողովրդի հաճութեամբ մարզպան կարգուեցաւ Սահակ Բաղրատունին, որի խնդրանք Մովսէս Խորենացին գրել էր Հայոց ազգի պատմութիւնը: Բոլոր միաբան հայերը երգուեցան, որ ամեն կերպով պիտի հնազանդին իրանց մարզպանի և սպարապետի հրամաններին:

Վահանը մի րոպէ չմոռացաւ իր պաշտօնը:

Ա. ԲԱԲԱՆԱՆԵԱՆ

(Կըշարուհակուի)



ԾՆՆԴԱՎԱՅԻ

Հ, պաշտելի ծննդավայր,
Իմ կեանք, իմ, յոյս, իմ արև.
Արդեօք երբ պիտ' արժանանամ
Տալ քեզ իմ քաղցրիկ բարև:

Ե՞րբ պէտք է իմ արցունքով լի
Վշտից հանգած աչքերը
Տեսնեն դարձեալ քո լայն, արձակ,
Կանաչադարդ դաշտերը:

Ե՞րբ պէտք է ես քո կենսատու
Ջրից խմեմ, զովանամ.
Ա՛խ, երբ պէտք է յողնած մարմնոյս
Քո ջերմ գրկում հանգիստ տամ...

Հեռու քեզնից, անապատտան,
Թափառում եմ անդադրում.
Չկայ ոչ ոք ինձ կարեկցող,
Կեանքս հալվում է, մաշվում:

Չոր դետիներն է իմ անկողին,
Կերած հացս մուրացած.
Ո՛հ, իմ քաղցր ծննդավայր,
Ուրքան եմ քեզ կարօտած...

ԱՂԷՔ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Նիժնի-Նովգորոդ.




ԸՆՏԱՆԵԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ




(Գլխանդէից)

արմինների կշռի, ծանրութեան կենտրոնացման, կայուն և անկայուն հաւասարակշռութեան մասին կարելի է հասկացողութիւն տալ ամենահասարակ առարկաների միջոցով. մի խցանի երկու կողմից հաղցրէք երկու պատառաքաղ և դրէք շշի բերնի եզրին. պատառաքաղները խցանի հետ կազմում են ինչպէս մի ամբողջութիւն, որի ծանրութեան կենտրոնը



գտնւում է լեւնման կէտից ցած. կարելի է կռացնել շիշը, մինչև անգամ թափել նրա միջի հեղուկը, չխանգարելով շշի բերնի ծալքին կազմած դրութիւնը, նրա հաւասար-


րակշռութիւնը: Էլի մի օրինակ՝ շատ հեշտ և շատ պարզ կերպով բացատրող ոչժի ուղղութեան օրէնքը: Վերցնենք մի բանալի և նրա բերանը մտցնենք կեռ ծայրով մի մեխ, որին պինդ կապելով մի փայտէ քանոն, սրա ծայրիցն էլ կախելով մի քար $\frac{1}{8}$ — $\frac{1}{4}$ զրուանքանոց. ապա մի մեծ գնտասեղ կպցնելով սեղանի երեսին, կազմում ենք հաւասարակշռութեան դրութիւնը, ինչպէս ցոյց է տուած



պատկերի վրայ. այս հաւասարակշռութիւնը այն աստիճան հաստատուն է, որ բանալին իրանից կախուած բոլոր առարկաներով կարող է շարժուիլ, օրօրուիլ:

Ոչժի ուղղութիւնը—գիծը՝ ծանրութեան կենտրոնից անցնում է յենման կէտով. այդպէս անհամար դանազան ձևերի փորձեր կարելի է անել պահպանելով այս հիմնական օրէնքը, որ ծանրութեան կենտրոնը ուղիղ գտնուի յենման կէտի ներքև: Այդ հիման վրայ կարելի է

գրաֆինը մի ծղօտով բարձրացնել, որի կերպը պարզ ցույց է տուած այս պատկերի վրայ. առաջ պէտք է խոտի ծղօտը կորացնել և մտցնել գրաֆինի մէջ այնպէս որ նրա կռացրած մասի ծայրերը յենուին գրաֆինի ներքևի և վե-



րևի կողմերին. այդ փորձերը պիտի անել զգուշութիւնով, ճարտարութիւնով, եթէ չլաջողուին առաջին անգամից՝ պիտի կրկնել, մանաւանդ որ ամեն բանի մէջ վարժութիւն է հարկաւոր:

ԽԱԶԻԿ





ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Թ.

Կ Ա Թ

անազան ժամանակ են ծնոտում կովերը. իսկ էդ ոչխարները—մաքիները ծնում են իրանց գառնուկները որոշ ժամանակ. ցուլերը և կովերը միշտ միասին խառն են արածում, իսկ մաքիները ջուկ-ջուկ են արածում արու ոչխարներից: Նրեանն նահանգում, ուրեմն և Գեղարքունիքում Թոյլ են տալիս որ արու ոչխարները—խոյերը՝ միասին ման գան մաքիները հետ հոկտեմբերի սկզբից: Արցախում կամ Ղարաբաղում մաքիները խոյերը հետ են արածում միայն չունիսին և ծնում են հինգ ամսից յետոյ, որ կըլենն նոյեմբերին: Մաքին ծնելուց յետոյ երկու շաբաթից մինչև մի ամիս՝ մարդիկ նրան չեն կթում, այլ Թոյլ են տալիս, որ բոլոր կաթը ծծէ նրա վոքերիկ գառնուկը, որ մի քիչ ուժովանայ խոտ ուտելու համար. մի ամսից յետոյ մաքին սկսում են կթել, միայն դարձեալ Թոյլ են տալիս, որ գառնուկը օրը երկու անգամ ուտէ իր մօր կաթը մի քիչ. մի ամիս էլ այդպէս անցնելուց յետոյ, օրը մի անգամ են Թողնում որ գառը ծծէ մաքին կաթը. այլ ևս մի ամիս, ամիս ու կէս անցնելուց յետոյ, իսպառ դադարեցնում են կաթ տալ գառին, որ այժմ արդէն բաւական մեծացած՝ լաւ արածում է խոտ: Մաքին կթուում է ամբողջ տարին 4—5 ամիս, սկզբում ամիս ու կէս, երկու ամիս՝ օրը երկու անգամ, ապա օրը մի անգամ. մաքին խոտի լաւ ամիսներին—մայիսի վերջին, չունիսին, տալիս է մէկից մինչև $2\frac{1}{2}$ ֆունտ կաթ օրական. իսկ վերջում՝ $\frac{1}{3}$, $\frac{1}{2}$ կամ հազիւ մի ֆունտ կաթ: Նոր-Բայազդիդի գաւառում մաքիներին կթում են կլեները: Շարուրի Թուրքերի մօտ նրանց կթում են տղամարդիկ:

Կովերը ծնելուց յետոյ մի քանի օր՝ երբեմն մինչև երկու շաբաթ՝ չեն կլթում նրանց, բոլոր կաթը թողնում են հորթերին, ապա կլթում են. դարնանը, ամառը և մի ամիս աշունքից օրը երկու անգամ, յետոյ օրական մի անգամ և դադարեցնում են կլթելը մի ամիս, երկու ամիս, կամ երկու շաբաթ առաջ նրա ծնելու ժամանակից. այդպիսով, դաշտային տեղերում ամբողջ տարին կովը կլթվում է համարեա 10 ամիս, իսկ լեռնային գեղերում 7—8 ամիս՝ նայած կովի պահպանութեան, սննունդին, առողջութեան և այլն: Այրի-ճայի մի քանի տեղերում, օրինակ Եմիս գեղում, Արցախի Քալբաձար գաւառում յունիսին ամբողջ՝ կլթում են կովերը օրը երեք անգամ. լաւ կովը մի օրում տալիս է այդ տեղերում կէս փութից աւել կաթ. իսկ Գեղարքունիքում ամենալաւ կովը տալիս է օրական հազիւ 12 ֆունտ կաթ: Թէ կովերը և թէ ոչխարները ամենաշատ կաթ տալիս են մայիսին և յունիսին, երբ խոտը թարմ և առատ է. յուլիսից կամ օգոստոսից կաթի քանակութիւնը պակասում է, առաջին ամիսներում կաթը լինում է շատ ջրալի և քիչ իւղալի, նոսր, որովհետեւ այդ ժամանակուայ խոտն իսկ շատ ջուր է պարունակում իր մէջ, իսկ ամառուայ վերջին և աշնան կաթը լինում է թարձր և շատ իւղալի. այդ պատճառով գարնան կաթից գլխաւորապէս պանիր, իսկ ամառուայ և աշնան կաթից առ հասարակ իւղ են շինում: Տեղացիները ասում են, կովի կաթի իւղն է գովելի, իսկ ոչխարի պանիրը, ուստի գլխաւորապէս կովի կաթից իւղ են շինում, ոչխարի կաթից էլ մեծ մասամբ պանիր:

Ամենաթանձր իւղալի կաթը համարվում է նախ ոչխարինը, ապա մատակ գոմշինը և յետոյ կովինը, բայց վերջինս է ամենից անուշը, գլխաւորապէս և առողջարարը: Կաթը խմում են հում կամ տաքցրած. նրանից եփում են կաթով կոշտած կերակուրը. եռացրած կաթի մէջ եփում են բրինձը, որ աւելի ակորժակով ուտվում է, երբ մի քիչ պաղած է: Կաթից շինում են մածոն այսպէս. եռացրած կաթը թողնում են այնքան հովանայ, որ մատը մէջ դնելով զգացուի որ նա մի քիչ միայն տաք է, գուլ է, այն ժամանակ մի կաթսայ, մի փութաչափ կաթի մէջ ձգում են մի դրգալ հին մածոն և լծելով խառնում են, ապա կաթսան մի թաղիքով կամ կապերտով ծածկում են, որ շուտով չսառնի, հինգ-վեց

Ժամից յետոյ մերուած նոր մածուներ պատրաստ է:

Պանիր շինելու համար նախ պէտք է ունենալ մսյա, որին Գեղարքունիքի հայերը անուանում են դեղ և դեղաջուր և որ պատրաստվում է այսպէս. վեր են առնում զառան կամ հորթի ստամոքսի վրայ գոյացող ճարպային փառը, որ ասվում է շիլա, կտրտում են դրան, աղում են, հետը խառնում են քիչ շիլա, շաքար, չամիչ, արմաւ, ցորեն, և ոմանք զանազան այլ համեմունք, որոնք անպայման հարկաւոր չեն, օրինակ վայրի սոխ և ալն, ու այդ ամենն ամելով մի կաւէ ամանի, պտուկի, կամ պուլիկի մէջ, դնում են տաք տեղ, արևում կամ լոռերի կողքին. երկու երեք օրից յետոյ այդ նիւթերի խառնուրդն արդէն ունի այն յատկութիւնը, որ կարող է կաթը մակարդել, մերել, գոյացնել պանիր. մօտաւորապէս 1—2 փութ կաթի մէջ ձգում են այդ դեղից մի դրութայ. Նոր-Բալաղդի բնակիչները ոչ թէ ուղղակի յիշեալ նիւթերից գոյացած խառնուրդն են գործ ածում, այլ նրանց եփում են ջրի մէջ, ուր անցնում է նրանց բոլորի հիւթը և արդէն այդ ջուրն են գործ ածում, որ ասվում է դեղաջուր. 1—2 փութ կաթի մէջ ածում են մի շերեփի դեղաջուր:

Պանիր շինելու համար չպէտք է կաթը եռացնել, այլ պէտք է վեր առնել նոր կթած տաք-տաք կաթը, կամ եթէ պաղած է, մի թեթիւ տաքացնել. դեղաջուրը ամելուց յետոյ մի կէս ժամից արդէն կաթը մակարդուած եղած է պանրային պանգուած, որ լծալու է կտաւի քսակի մէջ ու մըզում, որ ջուրը քամուի, ապա դնում են այդ պանրով քրսովը քարերի վրայ, վրան էլ դնում են ծանր քարեր, որոնց ճնշողութիւնից մի քանի ժամից յետոյ բոլոր ջուրը պանրից դուրս եկած է լինում և ստացվում է խոշոր կտոր պանիր: Պանիրը երկար ժամանակ պահելու համար, մանր կտրտում աղում և լցնում են աղաջրով լեքը օշնակների կամ կարասների մէջ. կամ թէ չէ կտրտած աղած պանիրը լաւ խառնելով ժաժիկի (շորի) հետ, լցնում են յիշեալ կաւէ անօթներին մէջ. այս վերջինը ասվում է մոծակ, մէջի պանիրն էլ մոծակի պանիր:

Իւղ շինելու համար վեր են տոնում երեք կամ չորս օրուայ մածուներ ու մի փութաչափ ածում են խնոցին, որ պարաններով կախուած է լինում փայտի եռոտանիից կամ տանիքի գերանից և երկու կէն սկսում են խնոցին առաջ ու

յետ տանելով հարել, հետզհետէ գոյ ջուր էլ ածելով խնոցիւմ եղած մածնի կէսի չափ. ինչքան մածունը հին է, այնքան շուտ է ստացւում իւղը և ընդհատաւոր. պատահում է որ մինչև 10 օր շարունակ մածուն են գումարում, որ պահում են տիկերի մէջ, ապա սկսում են հարել. 2—3 օրուայ մածունից իւղը դուրս է գալիս երկու ժամ հարելուց. 8—9 օրուայ մածունը կէս ժամ լաւ հարելուց արդէն գոյանում է իւղը: Կրթ խնոցում իւղային մասերը դուրս են ցատկում մածնաջրի—Թանի երեսը և իրար կպչում, այն ժամանակ դարդակում են խնոցին կտաւի մէջ, կամ ուղղակի ձեռքով խնոցին միջից հաւաքում են իւղը և կտաւի մէջ մըզելով, ջրով էլ լուանում են, որ Թանաջրից լաւ մաքրուի. այդ Թարմ իւղը ասվում է կարագ. կարագը աղում են և լցնում տիկերի մէջ պահում. աղած կարագը երկար պահելու կամ կերակուրի համար գործ ածելու համար, պէտք է հալելով մաքրել կեղտերից և փաշտի, կտւի, կաշիի ամաններում սրահպանել: Մածունը հարելուց և իւղը դուրս բերելուց յետո՛յ՝ մնացորդ հեղուկը ասվում է Թան. Թանը կրակի վրայ եռացնում են ու լաւ քամում ջրային մասը, ստացած փխրուն նիւթը ասվում է ժափի, Թուրքերէն՝ շոր. ժափիկը հացով կամ կարագով ուտում են. աղում են պահում ձմեռուայ համար. ժափիկով պանիր են պահպանում և մոթալ շինում, ինչպէս վերը չիշեցի: Խսի եթէ Թանը ջրից քամուի ու մնացած զանգուածը կտոր-կտոր արւում չորացնուի՝ այն ժամանակ կտաւցուի աղքատների բաժին չորամանր: Չորաթանից շինում են քալակոշ կերակուրը:

Մածունը ամում են կտաւի քսակի մէջ կախում են, բոլոր ջուրը դուրս գալով՝ ստացվում է քամած մածուն, որ համով աւելի դուրեկան է քան հասարակ մածունը: Քամած մածնի հետ խոտներով մի քիչ կարագ և սեր՝ Թեթե աղ անելով, ամում են մի պտուկի մէջ ու պահում են բերանը կապած պաղ տեղում 2—3 ամիս, որից յետո՛յ ամբողջ այդ խառնուրդը դարձած է լինում սէրի կամ կարագի պէս մի բան, շատ ամուշ համով. դրան ասում են մածնակարագ:

Սերը երեք տեսակի է և երեք՝ կերպ է հաւաքվում: Նոր կթած կաթը բերանը լայն կաթսայի մէջ դնում են սառը տեղ. ամբողջ ցերեկը և գիշերը մնալով, կաթի միջի իւղային մասնիկները—սերը բարձրանում է վերև և բաւական

Հաստ շերտով կանգնում է, որ դրգալով հաւաքում են—այդ է կաթ-սեր: Երկրորդ կերպը հետեւեալն է. կաթը կաթսայում եւի ածելուց յետոյ, թողնում են որ սառչի, այդ ժամանակ նրա երեսին նոյնպէս կապւում է սերի շերտ. այդ էլ կոչւում է թուրքի կամ Ղարաբաղի սեր. վերջին տեսակն է մածնի սերը. երեսը չքաշած կաթից երբ մածուն են մերում, մի 6—8 ժամից մածնի երեսին գոյանում է լաւաշի պէս հաստ և պինդ սեր. այս վերջին տեսակը շինում են Երևանի նահանգում մանաւանդ քրդերը:

Հայերը շինում են դարձեալ մի տեսակ պանիր, որ անուանում են թիլ պանիր կամ դաժ. պատրաստում են այսպէս. հէնց որ դեղաջուրը կաթի մէջ ածելուց յետոյ՝ վերջինս մակարելում է, նրան ձեռով սկսում են հարել, խառնել այնքան, որ նա դառնում է մի մածուցիկ, կաշուն զանգուած, որին կարելի է երկար պարանի կամ նոյնիսկ թելի պէս երկարացնել և այդ ձևով աղաջրում երկար ժամանակ պահել. համը ախորժալի չէ:

Ոչխարի բուրդը խուղում են տարին երկու անգամ. գարնան և աշնան. գարնան բուրդը լինում է երկար մազով և ստացւում է իւրաքանչիւր ոչխարից 3 մինչև 7 ֆունտ (չըլուացած). աշնան բուրդը ստացւում է շատ քիչ—հազիւ $1\frac{1}{2}$ —1 ֆունտ և այնքան կարճ մազով է լինում, որ թել չի շինուել նրանից, այլ գործ են ածում միայն թաղիք (քեչա) և քրդի գդակ (քուգ) շինելու համար. գարնան բուրդը բացառապէս թել է մանւում զանազան դործուածների համար:

Մեր երկրի ժողովուրդի ամենամեծ մասը զեղապիններ են—երկրագործ—անասնապահ. դրանց մօտ է մեր հաստատ հարստութեան, բարօրութեան առհաւատչեան. ամեն մի քաջ դրանց կեանքին մօտ ծանօթանալու, ամեն մի լիոք ընկ միջոց դրանց օգնելու իրանց սլարապմունքում յառաջադնմելու՝ կընշանակէ կենդանութիւն տալ հայրենիքին, մղել նրան դէպի քաղաքակրթութեան ճանապարհը:

Սրանով վերջացաւ նամակներէս այն շաբթը, որի նպատակն էր մի քանի տեղեկութիւններ հաղորդել Նոր-Բայազեդի գաւառի կամ Գեղարքունիքի հայաբնակ մասի վրայօք: Յաջորդ նամակներով նոյն ձևով համառօտաբար կընկարագրեմ մեր երկրի ուրիշ-ուրիշ վայրերը:

Ն. ՏԵՐ-ԱԻԵՏԻՔԵԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեկնեբեց (բաղնեջ, թաւա-
թաբեթե) ազատուելու մի-
ջոց: Որպէս զի Միկները զիշերն
անհանգիստ չանեն, 1) պէտք է
անկողինը եւ սաւանը օգէկօյնով
սրսկել կամ անկողնի մէջ ու բար-
ձի տակ լիմոնի թարմ կեղեւ դը-
նել: 2) Այն ճեղքերը, որտեղ
միկներ են գտնվում օծել սկիայի-
տարով (ամենամաքուր նաւթ):
3) Միկների դէմ համարվում է
ամենալաւ միջոց քացախի թը-
թուն, որով սրսկում են մահ-
ճակալի բոլոր ճեղքերը: Նրան կա-
րելի է ամել մինչեւ անգամ բո-
լոր այն բացումները ուր միայն
գտնվում են միկները:

Մագաժորթները Հաւկեթ-
ներէ մէջ: Առաջ շատ հասկա-
նալի էր թվում թէ հաւկիթների
մէջ կարող են կենդանի որդեր
լինել: Իսկ այժմ այդ բանը բոլո-
րովին ապացուցուած է: Բերլի-
նում մի տիկին հաւկիթի սպիտա-
կուցի մէջ գտաւ մի մեծ որդ, որն
ուղարկեց Բերլինի կենդանաբա-
նական այգու դիրեկտոր Մէքիու-
սին:

ՍԼ անձրեւ. Իրանդական
Վաստկօմէր քաղաքում երկու շա-
բաթ սրանից անաչ տեղի է ու-
նեցել մի զարմանալի եւ արտա-
բոյ կարգի բնութեան երեւոյթ: Կէ-
սօրից յետոյ, մօտ ժամը 4-ին,

երկինքը մթնեց, ամպը որոտաց
եւ մէ ժամից յետոյ սկսեց տե-
ղալ բոլորովին սեւ անձրեւ: Այդ
անձրեւը բովանդակում էր իր մէջ
մի տեսակ չհալուող փոշի, որ կիղ-
տոտեց անցորդների զգեստները:
Այդ անձրեւից սեւ գոյն տուալաւ
գետերի եւ ջրհորների ջուրը:

Շնչառութեան մասին:

Սօրբօնի պրօֆէսոր Գրէգանա շըն-
չառութեան վերաբերեալ մի հե-
տաքրքրական փորձ արաւ: Նա
ձգեց ձկներ ջրով և ապակեայ
գնդակի մէջ, որն ամուր (օդա-
խիտ) փակուած էր: Մի քանի
ժամից յետոյ ձկները դադրե-
ցան շարժուելուց, կարծես թէ
քնած էին: Նրանք խեղդուեցան
ի հարկէ, որովհետեւ ներշնչելով
օդի միջի բոլոր թթուածինը, նրա
փոխարէն արտաշնչել էին ածխա-
թթու: Հետեւեալ օրը Գրէգանտ
միեւնոյն գնդակի մէջ ձգեց նախ
ճահճալին բոյսեր եւ ղնելով լոյսի
մէջ, կրկին ձգեց գնդակի մէջ
ձկներ եւ յետոյ ամուր փակեց:
Ձկները երկրորդ օրն անգամ ցատ-
կոտում եւ տուգում էին: Այս բա-
ցատրվում է նրանով, որ լուսի
մէջ դրուած բոյսերը ներշնչում
են ածխածնու եւ արտաշնչում
թթուածին: Բոյսերի արտաշնչա-
ծը ներշնչում են ձկները եւ այդ-
պիսով բոյսի կեանքն ապահովե-
ցնում է կենդանու կեանքը:



ՁԵՌՔ ՀԱՄԲՈՒՐԵԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ

եռք Համբուրելու սովորութիւնը, որ մեծ քաղաքավարութիւն է Համարվում ատ- տնին կեանքի մէջ, շատ Հին ժամանակ- ների սովորութիւն է: «Կեղծաւորներն—ասում է Սողո- մոն—չեն դադարում իրանց պաշտպանների ձեռքը Համ- բուրելուց»: Հին կուսապաշտական դարերում երբ կամենում էին խոնարհիլ աստղերին, Համբուրում էին իրանց ձեռ- քը: Հնդկացիք արեգակին երկրպագելիս, ձեռքը պահում էին բերանի մօտ և Համբուրում: Հարուստ լոյները աս- տուածներին դոհ էին անում, իսկ աղքատները միայն Համ- բուրում էին կուռքերի ձեռքը և Համբուրներ էին ուղար- կում գէպի հարիզին: Այդ սովորութիւնն ունէին և հռով- մայեցիք, որոնց Համար արդէն օրէնք էր դարձած. —ով որ անցնէր կուռքի մօտից և չՀամբուրէր նրա ձեռքը, Հա- մարվում էր անաստուած. առ Հասարակ Հռովմում բոլոր ստորադրեալները պարտաւոր էին Համբուրել իրանց աւագ- ների ձեռքը: Կայսրները շատ մեծ նշանակութիւն էին տալիս երբ նրանց ձեռքը Համբուրում էին նշանաւոր անձեր. այդ Համարվում էր էտիկէտի գլխաւոր Հիմն: Ստորին դա- սակարգի մարդիկ չէին Համարձակում ուղղակի Համբու- րել ձեռք. —նրանք ծունկ էին չոքում, աջ ձեռքով շօշա- փում էին կայսրի զգեստի ծայրը և յետոյ Համբուրում էին իրանց սեփական ձեռքը: Կայսերական թիկնապահները նրան Համբուր էին ուղարկում հեռուից: Քրիստոնէութիւնը մտնելուց յետոյ եպիսկոպոսները և այլ հոգեւորական ան- ձինք պատիւ էին Համարում իրանց ձեռքը Համբուրել տալը և միշտ մեկնում էին ձեռքը իրանց մօտ եկողին:



ՀԱՆՆԵԼ ՈՒԿՆԵՐ

Առաջ. Աղ. Ծատուրեան.


Մինչդեռ ամեն բան—
Ծառ, բոց, մարդ, գազան,
Դողում են ցրտից
Ձմեռ ժամանակ,
Ես ընդհակառակ,
Ձրմեռը շոգից
Այնպէս եմ այրվում,
Այնպէս խորովում,
Որ եթէ մէկը
Փորձէ իր ձեռքը
Կպցնել իմ մարմնին,
Մատները կալրուին.
Իսկ ընդհակառակ
Այդպէս չի լինում
Ամառ ժամանակ.
Ամառուայ շոգին
Իմ ամբողջ մարմին
Իսպառ սառչում է:
Դէհ, զտէք տեսնեմ,
Թէ ես ինչ բան եմ:

Դաշտը սպիտակ է, ցորենը սև:



Առաջ. Աշոտ Ջիւեանց:

Այս ցանցերի մէջ պէտք է տեղաւորել
— 2 ս, 2 ի, 2 ո, 2 ն, 2 կ, 1 տ, 1 մ,
1 լ, այնպէս որ ինչ բառեր կազմվում են
վերևից ներքև կարդալիս, նոյն բառերը
կազմուին ձախից աջ կարդալիս:



Հ Ո Ւ Տ Ա Ս Ե Լ Ո Ւ Կ

Փշատ տաշեց փայտատաշը
Փայտատաշը փշատ տաշեց:

Նախընթաց №№-ի մէջ
եղած Հանելուկների, կը-
րիստոգրամի, առաջար-
կութեան և ընթուսի բա-
ցատրութիւնները: Հանե-
լուկների բացատրութիւնը՝
1) ճրագ. 2) Հանելուկ:
Կրիստոգրամի բացատրու-
թիւնը՝ Գէորգ Չմշկեան:
Առաջարկութեան բացա-
տրութիւնը՝ Քամ: Բերու-
սի բացատրութիւնը՝ Որ-
դին պարտական է պատ-
վել իր հօրը և մեծերին:

	ա	մ	Տարի.
Գ	ա	մ	Բայ. գալիս եմ..
Գ	ա	մ	Մէկ.
Թ	ա	մ	Թշնամի.
Ժ	ա	մ	Եկեղեցի.
Ժ	ա	մ	Ժամանակ.
Լ	ա	մ	Լալիս եմ.
Ծ	ա	մ	Մագերի հիւսը.
Կ	ա	մ	Ապրում եմ.
Կ	ա	մ	Կամ. շաղկապ
Հ	ա	մ	Ճաշակ.
մ	ա	մ	Մեծ մայր.
Ջ	ա	մ	Դամակոս քաղաք
2	ա	մ	Ծառ.
տ	ա	մ	Տալիս եմ.
Ք	ա	մ	Մարդու անուն.

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՅ